ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 51/Դ-21

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «09» «դեկտեմբեր» 2021թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի քարտուղար Դ. Համբարյանի, որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Լիազոր մարմին) մի կողմից, և «Երևանի Վ. Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Լ. Ղասաբօղլյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ՝ միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 27-ի N 1388-Ն որոշման 3-րդ կետը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Լիազոր մարմինը պարտավորվում է Կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված ք. Երևան, Ն. Զարյան 23 հասցեում գտնվող նորակառույց շենքի համար նոր գույքի ձեռքբերման նպատակով հատկացնել **22 565 800** (քսաներկու միլիոն հինգ հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի 1183. «Ապահով դպրոց» ծրագրի «32012. Հանրակրթական դպրոցների գույքով և տեխնիկայով ապահովում» միջոցառման (բաժին՝ 09, խումբ՝ 06, դաս՝ 01), բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Լիազոր մարմինը իրավունք ունի.

2.1.1. Վերահսկել Կազմակերպությանը հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.2. Կազմակերպությունը իրավունք ունի.

2.2.1. Սահմանված կարգով Լիազոր մարմնից ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը:

2.3. Լիազոր մարմինը պարտավոր է.

2.3.1. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը Կազմակերպությանը փոխանցել 3.2. կետում նշված ժամկետում:

2.3.2. Կազմակերպությանը ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն և աջակցություն:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է.

2.4.1. Իրականացնել Լիազոր մարմնի կողմից հատկացված գումարի՝ ՀՀ օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում:

2.4.2. Հատկացվող ֆինանսական միջոցները օգտագործել սույն պայմանագրի 1.1. կետում նշված նպատակով:

2.4.3. Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրերի շրջանակներում հանձնման-ընդունման և կատարողական ակտերի պատճենները ներկայացնել Լիազոր մարմնին:

3. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Լիազոր մարմինը սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը Կազմակերպությանը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կազմակերպության գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3.2. Վճարման ժամկետը սահմանվում է սույն պայմանագրի ստորագրման պահից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1.Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այդ իրավիճակը ստեղծվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են. բնական աղետները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ իրավիճակի հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում ստորագրման պահից, գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

6.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կամ համաձայնագիր /համաձայնագրեր/ ձևակերպելու միջոցով: Վերջիններս կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.3. Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, և հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լիազոր մարմին	**Կազմակերպություն**
Երևանի քաղաքապետարան ք. Երևան, Արգիշտի 1 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011038537 ՀՎՀՀ 02593108	«Երևանի Վ. Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոց» ՊՈԱԿ ք. Երևան, Ն. Զարյան 23 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900018005109 ՀՎՀՀ 00031233
Աշխատակազմի քարտուղար	**Տնօրեն**
..... Դ. Համբարյան (ստորագրություն) Կ.տ	..... Լ. Ղասաբօղլյան (ստորագրություն) Մ.Տ